ՆՈՐ-ԴԱՐ

№ 199 ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի, 3 Նոյեմբերի 1898 Երեքշաբթի, 3 Նոյեմբերի ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 199

Տարեկան՝ 10 րուբլի, վեց ամիսը 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Թիֆլիսում ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատունը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 3-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների գաւիթն՝ 2 կ., րեկլամների համար՝ կրկնապատիկ։

«Նոր-Դար»-ի խմբագրատունը գտնւում է Իօղլչայա-վադաւօշնայա փողոց, Ալվազովի տունը, № 20, Սահակեօրնի զօրանոցի դիմացը։

Ա Զ Դ

Նրանց, որոնք դեռ չեն վճարել այս տարուայ բաժանորդագինը և նրանց, որոնց վրայ անցեալից ապառիկները են մնում, խմբագրութիւնս յիշեցնում է իրենց պարտքը։

Նոյեմբերի 1-ից 931-ն ղեկտեմբերի «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում եւ վճարում են 2 րուբ. 50 կոպ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Հացի պակասութիւնը։

Քրոնիկոն։—Լուրեր։

Մեզ գրում են.—Թոփալ գիւղից։

Ժանտախտը։

Նաւթահանքային հետազօտութիւնները։

Թղթակցութիւններ.—Պետերբուրգ։

Նամակ Փրանսիայից Պարիզ։

Նամակ Տաճկահայաստանից. Խնուս։

Քաղաքական.— Թուրք-գերմանական համաձայնութիւնը։ Կրետէ։ Փրանսիա և Անգլիա։ Անգլիան և Ռուսիան Չինաստանում։ Չինաթափի խնդիրը։

Խառն լուրեր. Գրական աշխարհից։

Հեռագրներ։

Բանասիրական. — Պալճրին սովփանքը։

Տեղեկատու։

Յայտարարութիւններ։

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ

ՊԱԼՃՐԻՆ ՍՓՈՓԱՆՔԸ

(Պոլսոյ բարքերէն)

—

Դեռ կը յիշեմ Հաճի-Միհրանը. անոր ամեն մէկ ձեռքը, խօսուածքը, ձայնը, դէմքին առնական ու անկեղծ արտայայտութիւնը, բոլորը, բոլորը մաքիս մէջ կը պահկերանան հիմա՝ կարծես թէ մէկ-երկու վայրկեան առաջ տեսած ու լսած ըլլայի զինքը։

Նաւավոր մըն էր ան, ձկնորս-նաւավար մը՝ Սամաթիոյ էն ծանօթ ու էն վարպետ նաւավարը։ Տարիքը հազիւ թէ 28-ն անցնէր։

Դէպքէ մը առաջ, որ պիտի ըսեմ, ցնցած էր և որ քիչ մը վարը պիտի պատմեմ, միշտ զուարթ էր ան, ջղային մարդու մը անհանգստացնող ուրախ ու մըշտածիծաղ դէմքով։ Իր սև աչքերը սև, երկայն արտանուքներուն ու բարակ, ածխագոյն յոնքերուն տակ միշտ կը խաղային՝ սրամիտ և նուրբ հոգատարութիւն ունեցող մարդու մը աչքերուն անհանդարտ չարժումով։

Թիֆլիս, 2 Նոյեմբերի 1898 թ.

ՀԱՑԻ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆԸ

—

Դեռ ձմեռը չի եկել, արդէն հացի պակասութեան և ապագայում սպառնացող սովի մասին երկիւղ և դանգատներ ենք լսում մեր գաւառական թղթակիցներից։

Դուցէ այս տարի ցորենի արտերը վնասուել են, գուցէ այս տարի անբերը տարիներից էլ՝ հունձը անաջող, պակաս, վատ... Մեր ստացած տեղեկութիւններից երևում է, որ ընդհանրապէս այս տարի ցորենի հունձը գոհացուցիչ է եղել, եթէ վնասուել են, գլխաւորապէս լեռնային տեղերում գտնուող երկրագործներն են վնասուել, ցորենըսպասասուածից քիչ է եղել։

Ուրեմն ինչ բանի վերագրենք ցորենի պակասութեան և թանկութեան մասին զանազան կողմերից մեզ հասնող դանգատները։

Մի քանի տեղից, ինչպէս և Երևանից, մեր թղթակիցների մեզ հաղորդած լուրերը ցորենի թանկութեան գաղտնիքը բացատրում են մեզ։

Հացի գինը բարձրանում է. և գնալով՝ աւելի կըբարձրանայ ցորենով *առևտուր* անողների շնորհիւ.

Շատերը իրենց առևտրական *սպեկուլացիա* առարկայ են ընտրել ցորենը, դրանք արհեստականի ճանապարհով *թանկացնում* են ցորենի գինը, հաւաքելով գիւղացիներից ցորենը և ամբարելով։

Հայ, և թիւրք և պարսիկ վաշխառու-առևտրականները կամ մարդիկ, որոնք մտածում են միանգամայն հարստանալ, խօսքը մէկ արած գիւղացիներին չեն թողնում, որ ցորենը քաղաք բերէն, այլ իրենք առնում են տեղնուտեղը և գիւղացիների սայլերով քաղաք են ուղարկում ու պատրաստի կանգնած իրենց *գործակալների* ձեռքով քաղաքի հրապարակների վրայ, արդէն իրենց սեպհական ցորենի գինը բարձրացնում և ամբարներն են քշում ցորենի սայլերը։

Այդպիսով ցորէնի, հացի գինը արհեստական ճանապարհով թանկանում է։

Եւ իհարկէ երբ գիւղացիների, երկրագործների ցորենը, ալիւրը երկրի բոլոր հացապտուղը մի քանի տասնեակ վաշխառու առևտրականների ձեռքն ընկաւ, այնուհետև հացի գինը աւելի կը բարձրանայ և չունևոր, օրեկան աշխատանքով ապրող ժողովուրդի դրութիւնը աւելի քան անտանելի կը դառնայ։

Ժամանակ է, որ ցորենով *սպեկուլացիա* անողների եռանդին սահման դրուի։

Ինչպէս *ջրի* այնպէս և հացի գինը չը պէտք է ազատ առևտուրի պայմաններով որոշուի։

Ժողովուրդին, ամեն բանից զբրկուած աղքատին հաց է հարկաւոր, իսկ հացը անհրաժեշտ է, հետևաբար հացի պահանջին պէտք է, անհրաժեշտ է գոհացում տալ։ Ոչ ոք իրաւունք չունի ասելու թէ փող եմ տուել, առել եմ ցորենը, և իմ սեփականութեան *տէր* եմ, ինչ գնով կուզեմ կը ծախեմ, կամ ամենևին չեմ ծախիլ։

Այդպիսիները ինչ կասեն, եթէ ամբոխն էլ ասէ թէ քաղցած եմ հաց եմ տեսնում և վերցնում ուտում եմ։

Այդ դէպքում գուցէ հացի տէրը գանգատուի դատարանին և կամենայ իւր իրաւունքները պաշտպանել, բայց հէնց դատաւորն ինքը պարտաւոր է և պահպանել հաց խնդրողներին վաշխառու առևտրականների ձեռքից։

Salus publicae prima lex, *ժողովրդի* բարեկեցութիւնը առաջին օրէնքն է։ Այդ հիմանց վրայ պէտք է պինդ քաշել ցորենով սպեկուլացիա անող վաշխառուների ականջները, թալանել նրանց ամբարները և ծախել ցորենն այն գնով, ինչ գնով, որ նրանք առել են գիւղացի-երկրագործներից։

Ոչ մի գործում, հետևաբար և առևտուրի մէջ չպէտք է ժողովրդի, ընդհանրութեան *թերութեան* վրայ հիմնել անհատի բաղդաւորութիւնը, բարեկեցութիւնը։

Այն հանգամանքը, որ անհատը բաղդաւորւում է միայն ընդհանուրին հասնող ձախորդութեան դէպքով, դա կանոնաւոր և բնական դրութիւն չէ, դրա դէմ միջոցների պէտք է ձեռնարկեն ինչպէս հասարակութիւնը, նոյնպէս և մարմնաւորը իշխանութիւնը։

ՔՐՈՆԻԿՈՆ

Կիրակի, նոյեմբերի 1-ին, օրուայ ժամը 2-ին Թիֆլիսի գինուորական-պատմական թանգարանում բացուեց կոյրերի օգտին սարքուած պատկերահանդէսը։ Ներկայ էին Կովկասի կառավարչապետ իշխան Ի. Ս. Գալիցինը իւր ամուսնու հետ, Վրաստանի էքզարխ սրբազան Քերովբէն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Կ. Պ. Նաճովկին, Թիֆլիսի նահանգապետ Ֆ. Ա. Բիլովն և ուրիշ շատ պատուաւոր հիւրեր։ Հանդէսը բաց արեց կոյրերի խնամատար հոգաբարձութեան Կովկասի ճիւղի փոխնախագահ գեն.-լէյտ. Ս. Ա. Փրեզնիմի ճառով, որի մէջ յայտնեց, որ Կովկասում 10,000-ից աւելի կոյր կան, որոնց օգնելու համար է սարքուած այդ պատկերահանդէսը։ Այնուհետև խօսեց հոգաբարձութեան Կովկասի ճիւղի խորհրդի անդամ-քարտուղար Ն. Ա. Մարքսը, որը փորագիր նկարների պատմական տեսութիւնն արաւ և վերջը կոչում արեց կոյրերին օգնելու։ Պ. Մարքսի ճառից յետոյ այդտեղ և եթէ հաւաքուեց աւելի քան 1,000 րուբլի։ Ի վերջոյ հանդիսականները սկսեցին դիտել նկարները։

—

Ի նկատի ունենալով ժանտախտի երկիւղը, Թիֆլիսի նահանգապետը քաղաքային վարչութեանն առաջադրել է այժմ իսկ հոգալ քաղաքի մաքրութեան համար։ Ի դէպ նկատենք, որ քաղաքը մաքրութեան կողմից ամենաթոյլտուական դրութեան մէջ է։ Այն օրից, որ քաղաքային խորհուրդն որոշեց փողոցների մաքրութեան գործը տանտէրերի վրայ ձգել, փողոցները կատարեալ աղբանոցներ են դարձել, որովհետև ոչոք չկայ, որ քաղաքային խորհրդի որոշման կատարմանը հսկէ։

—

«Կաւկազ»-ը հաղորդում է, որ Կովկասի պ. Կառավարչապետի կարգադրութեամբ Տաճկաստանի սահմանի մօտ գտնուող Նալբանդեանի անուան գիւղում հաստատուել է հացի պահեստ։ Պահեստի համար շինուել է մեծ քարէ շէնք, որի մէջ կարող է տեղաւորուել 10,000 փութ հաց։ Պահեստի վերակացու է նշանակուած Ալեքսանդրապոլի գաւառական վարչութեան անդամ Ալեքսանդր Ալեքսանդրի Ղազարեանը։

—

Ղարաքիլիսայի գաւառական ժողովը որոշել է Ղարաքիլիսայի քաղաքային վարչութեան միջոցով հացահատիկ գնել և պահեստներում պահել։ Ժողովը որոշել է նաև հացահատիկ գնելու համար 10,000 րուբլի յատկացնել

Թիֆլիսի քաղաքային վարչության ժամանակավոր հանձնաժողովը հայտնում է, որ 1898 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ, Թիֆլիսի քաղաքային վարչության հանձնաժողովի կողմից կատարվելու են հետևյալ հանձնումները.

1) Ձիերի, եզների և էշերի համար 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի փայտե կամ երկաթե կամուրջների վրայով անցնելու համար, ինչպես նաև Ավլաբարի կամրջի վրայով անցնելու համար, որը գտնվում է Ավլաբարի և Ղալանդարի միջև, ինչպես նաև Ավլաբարի և Ղալանդարի միջև գտնվող ճանապարհ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

— Պետերբուրգից, 20 հոկտեմբերի. —

Ինչպես և ասվել էր, որ Նորին Կայսերական Մեծությունը Ցարեվիչ Գեորգի հետ միասին ուղևորվելու է Կովկաս, այդ կապակցությամբ Կովկասի փոխարքայ Գ. Ա. Գոլիցինը հրամայել է Կովկասի զորքերի հրամանատարներին, որպեսզի նրանք ներկայացնեն իրենց զորամասերի ամենալավ ձիերը, որոնք կարող են ցուցադրվել Նորին Կայսերական Մեծության առջև։ Ընտրված ձիերը պետք է հասնեն Թիֆլիս մինչև հոկտեմբերի 25-ը։ Ցուցադրությունը տեղի կունենա Թիֆլիսի մոտ գտնվող Ալեքսանդրովյան դաշտում։ Ցուցադրության համար նշանակված են հետևյալ պայմանները։

1) Ձիերը պետք է լինեն ամենաառողջ և ամենակատարյալ տեսակի, ունենան ուժեղ մկաններ, ամուր ոտքեր, լայն կրծքավանդակ, ուղիղ մեջք և ամուր ոտքեր։ Ձիերի տարիքը պետք է լինի 5 տարուց ոչ պակաս և 8 տարուց ոչ ավելի։ Ձիերի բարձրությունը պետք է լինի 2 արշին 6 վերշոկից ոչ պակաս։

2) Ընտրվելիք ձիերը պետք է ունենան հետևյալ գույները (մասնավոր դեպքերում թույլատրվում է նաև այլ գույների ձիերի ներկայացնելը)։ գ. պատառ Ս. Ղևոնդի (Հոկտեմբ.)։ Ընտրվելիք ձիերի մեջ պետք է լինեն ինչպես ամուր կազմվածքով, այնպես էլ թեթև ձիեր։ Ձիերի ոտքերը պետք է լինեն ամուր, ուղիղ և ոչ թե կոր։ Ձիերի գլուխը պետք է լինի ուղիղ, ականջները՝ կարճ, աչքերը՝ մեծ և ուղիղ։ Ձիերի պոչը պետք է լինի հաստ և ոչ թե բարակ։ Ձիերի մեջ չպետք է լինեն այնպիսիները, որոնք ունեն ոտքերի հետևի մասում մազեր։ Ձիերի մեջ չպետք է լինեն նաև

«Standard»-ը նկատում է, որ Անգլիայի Հինաստանում յանկարծ զինուիլը զուգադիպում է Զարլզ Բերեսֆորդի (Ծովային գործի յայտնի մասնագէտ) Նիւ-Զուանգ մեկնելուն, ուր նա գնացել է այս օրերս Պեկինից առանձին յանձնարարութեամբ։

Միևնոյն ժամանակ Հինաստանից մի և նոյն լրագրին հաղորդում են, որ ահա արդէն մի տարի է՝ Պորա-Ազատուրը լցուում է ռուս զօրքերով, որոնց թիւն այժմ հաշուում են 40,000 հոգի։ Բացի դրանից, ռուսները Նիւ-Զուանգում բանկի համար տեղ են ամրացնում։ Լորդ Բերեսֆորդը գտնում է, որ ռուսների պատրաստութիւնները Պորա-Ազատուրում և Նիւ-Զուանգում աւելի առաջ են գնացել, քան կարելի էր սպասել։

—

ՋԻՆԱԹԱՓԻ ԽՆԴԻՐԸ.—Վեննայի «Pol lit. Corresp.»-ին Պետերբուրգից հաղորդում են, որ ռուսաց արտաքին գործերի մինիստրութիւնը կազմել է զինաթափի կոնֆերենցիայի ծրագրի առանձին մասերի գլխաւոր գծերը։ Այդ ծրագիրն օտարերկրեայ կառավարութիւններին հաւանականաբար կը հաղորդուի սոյն նոյեմբեր ամսի կիսին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԽՐԱԳԱՆ ԸՆԹԱՐՀԻՑ

—

Ջոլայի վերջին ռոմանը, որ կրում է «Պարիզ» վերնագիրը, Վաթիկանում կարդինալների ժողովում բարեբաղդութիւն է ունեցել առաքեմայի արժանանալու, և Պապը «Պարիզ»-ը մտցրել է Index-ի մէջ իրենից արգելուած գրքերի ցուցակը)։

***

Ջոլան իւր «աքսորանքի» միջոցին մի նոր մեծ ռոման է գրել, որը համարւում է նրա վերջին երեք վէպերի («Լուրդ», «Հռոմ», «Պարիզ») շարունակութիւնը։ Այդ վէպը կրելու է «Բազմածնութիւն» (Fécondité) վերնագիրը։

***

Վիկտոր Հիւգոյի ծննդեան հարիւրամեակը լրանալու օրւայ համար (1902 թ.) Պարիզում պատրաստում են բանալու նրա մահարձանը, որ կանգնեցուելու է հռչակաւոր գրողի անունը կրող փողոցում։ Արձանի պատուանդանի վրայ քանդակուած Բարբիաս պէտք է այլաբանօրէն դուրս բերէ ներքոյ (ode) վէպ, ղեմ և երգիծանք։

***

Լեհացի հռչակաւոր վիպասան Հենրիկ Սենկևիչի գրական գործունէութեան 25-ամեակի առթիւ, որ այս օրերս լրացաւ, նրա համակրողների մի խումբ մտածել է նրան իւր մարմարիա կիսաքանդը՝ գործ. պրոֆ. Վելիչենկու հասարակական հանդիսաւոր յորելեան կատարելու պատիւը «Ծո երջա»-ի հեղինակը մերժել։

***

Լրագրները չինական վերջին թերթերից առաջ են բերել Հեռևեալ տեղեկութիւնը։ Պեկինում ցենզուրների մէկը կայսրին ներկայացնում է իւր մի գրութիւնը, որով խորհուրդ է տալիս երկնքի որդուն արգելել չինական լրագրներին՝ կառավարութեան գործերի մասին յօդուածներ գրելու։ Կայսրը իւր ձեռքով այդ գրութեան լուսանցքում գրում է. «Ով որ կայսրութեան այս վտանգաւոր գրութեան մէջ-ցին քաջութիւն կունենայ պետական ծառայողներին բարի խորհուրդներ տալու և յանդիմանելու նրանց մտածած վատ գործերը, նա կարող է անուանուել հայրենիքի բարեկամը և կը վայելէ ամենայն յարգանք»։

***

Սուլթանը հանդէս է գալիս մոմուլի և լրագրութեան հովանաւորող և երկրպագու. ով կը-սպասէր։ Այս տարի Լիսաբոնում տեղի ունեցած մամուլի ներկայացուցիչների միջազգային կոնգրէսին դիմել է նա և ցանկութիւն յայտնել, որ մի անգամ էլ այդպիսի ժողով գ. Կոնստանդնուպոլսում լինի։ Կոնգրեսի կեդրոնական վարչութիւնն իւր շնորհակալութիւնն յայտնելով փադիշահին վճռել է, որ առաջիկայ 1899 թուին մամուլի գործիչների ժողովը լինելու է Ստամբոլում։ Այնուհետև 1900-ին չի լինելու, իսկ 1901-ին լինելու է Պարսկաստանում, 1902-ին Ամերիկայում և 1903-ին Հայդելբերգում։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՊԱՐԻԶ, 30 հոկտեմբերի.—Լրագրները հաւատացնում են, որ ծովակալների ժողովը կարևոր որոշումներ է կայացրել ծովային պատերազմի ծրագրի վերաբերեալ։ Վաղուանից պահեստի գնդուած 100 նաւ կը պատրաստուեն ծովը դուրս գնալու։

ԿԱՆԽԱ.—Ձաքիր փաշային մի վերջնագիրը է ուղղուած, որով պահանջւում է, որ նոյեմբերի 15-ին (3-ին) բոլոր թուրք սպաները, զինուորները ու ժանդարմները, առանց բացառութեան, ինչպէս և Սուդայում կանգած մարտանաւերը հեռանան կղզուց։ Թրքական ռազմական բոլոր մթերքը կը մնայ ծովակալների պահպանութեան տակ։ Թրքական զրօշակը կիջեցնուի։

ԾԸՆԵՒ.—Սկսուեց Լուկենու դատը։ Նա ուրանում է, թէ համախոհներ է ունեցել, բայց հիմք կայ կարծելու, որ աւստրիական կայսրուհու սպանութիւնն իւր անձնական նախաձեռնութեան գործ չի եղել։

Կարդացուած է դատավճիռը. Լուկենին ենթարկուում է ցմահ բանտարկութեան ուղղիչ տան մէջ։

ՊԱՐԻԶ. — Սպանիական-ամերիկական յանձնաժողով։ Ամերիկացիները մերժում են սպանիացիների պատճառաբանութիւնները. ամերիկացիները չարունակում են ընդդիմանալ Կուբայի պարտքն իրենց վրայ առնելուն և պահանջում են Փիլիպպեան կղզիները, որին սպանիացիները չեն համաձայնում։

ԱԹԷՆԴ, 31 հոկտեմբերի. — Մինիստրութիւնը կազմակերպուած է։ Նախկին մինիստրներից մնացել է, ի միջի այլոց Զաիմիսը—նախագահ և արտաքին գործերի մինիստր։

ԲԱԼԼԻՔԿ.—Երկոյեան նոցին մեծութիւնները կը ժամանեն Բէյրութ և կը մնան «Հոհենցոլերն» զբօսանաւը, որն առաւօտեան ծովը կը մտնի։

ԽՐԻՍՏԻԱՆԻԱ. — Ստորագրինը որոշեց զուտ նորվեգիական դրօշակ մտցնել, առանց Շուեդիայի հետ ունեցած միութեան որևէ նշանի։

ՄԱԴՐԻԴ.—Թէև ևս յայտնի չի, Վիլհելմ կայսրն արդեօք ափ կիջնի Սպանիայում։

Մի լրագիր խորհուրդ է տալիս կայսրին մրջնոցի դատաւոր ընտրելու, եթէ հաշտութիւն կայացնող յանձաժողովը համաձայնութեան չի գալ։

ՊԱՐԻԶ, 1 նոյեմբերի. —Դրայֆուսը մը նամակ է գրել, որի մէջ ասում է, թէ ի նկատի ունենալով, որ հնարաւորութիւն չկայ իւր գործը վերաքննել տալու, ինքը վճռել է այլ ևս ոչ մի նամակ չգրել, թէ ինքը մեռնում է և Փըլանսիայի մեծահոգութեանն է յանձնում իւր անունը վերականգնել։ Այդ նամակի առթիւ տիկին Դրայֆուսը գաղութների մինիստրին և Դիւպուին խնդրեց, որ իւր ամուսնուն հաղորդուի գործի վերաքննութեան վերաբերմամբ վճռաբեկ ատեանի կայացրած որոշումը։ Որովհետև այդ խնդիրը մերժուած է, այդ պատճով